Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 07-06-2024 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 40
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00137
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-06-24
1.5 ՀՎՀՀ-ն		01511187
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91438047
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		aua.am
1.8 Էլեկտրոնային փոստը		mmkrtchi@aua.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա		
Հայաստանի Հանրապետության կառավարություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Լոուրենս Հ Փիթս		
Ժաննա Անդրեասյան		
Սյուզի Միսիրյան Անտունյան		
Արմեն Տեր Կյուրեղյան		
Պերճ Սեդրակյան		
Վազգեն Լ Յակուբյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Բրյուս Մայքլ Բողոսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	472	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Ուսանողական նպաստներ մագիստրատուրայի և բակալավրի ծրագրի ուսանողների ուսման վարձերի համար	120,416,700

	Ուսանողական կրթաթոշակներ մագիստրատուրայի ուսանողների համար	3,395,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ալպյան լեռնային խոտի մարգագետինների կառավարում	8,672,189
	Կանաչ տաքսոնոմիայի զարգացում Հայաստանում	12,124,600
	Բարելավված ջրային կառավարում Հայաստանում	1,990,878
	"Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն"	602,388,581
	Ներածություն «Կանաչ տնտեսություն» ինքնավար ինտերակտիվ առցանց դասընթացին	5,808,611
	Ինտեգրված թվային համակարգ ծովային տվյալների և տեղեկատվական ծառայությունների համար	313,530
	Սոցիալական վերափոխում ջրային տնտեսության ոլորտում քաղաքացի գիտնականների ներգրավվման միջոցով	274,033
	Հանրային քաղաքականություն, փորձագիտություն, վստահություն	6,549,172
	Կոպերնիկուս համակարգի միջոցով Սեվծովյան ավազանում իրականացվող շրջակա միջավայրի մոնիտորինգ	77,434,855
	ԱԼՊՄԱԿԱ Ալպյան Լեռնային Մարգագետինների Կառավարում Կոպենհագենի համալսարան	2,838,052
	Կանաչ Օրակարգ Հայաստան Վրաստան Ուկրաինա Մոլդովա	7,704,750
	Ժողովրդավարական պրակտիկաների եւ մեդիա գրագիտության ամրապնդման նախագիծ	5,618,397
	Սերվիս Թայթան վաճառքի ավտոմատացում	8,000,000
	Հարկային ծախսերի օպտիմալացման և ազդեցության գնահատման մշակում	4,158,081
	"Անդրսահմանային Էներգետիկայի համագործակցություն"	867,570
	Հայաստանում Էներգետիկայի Տրանսֆորմացիայի Ոլորտում Կլիմայական Լուծումների Գիտական Հետազոտությունների Զարգացման Ծրագիր (ԷՏԿԼԳՀԶ)	470,484,822
	Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն»	26,716,400
	Ծխախոտային արդյունաբերության մեջ վաճառքի կետերում ծխախոտի գովազդի առաջխաղացման և հովանավորչության արգելքի միջամտության հետաքննություն և հակազդում Հայաստանում	11,928,660
	Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարություն	12,033,060

	Գիտության և տեխնոլոգիաների միջոցով դեպի գլոբալ նորարարություն» նախաձեռնություն, (GIST)	2,757,300
	Անգլերեն ծրագիր ԶԼՄ-ների և PR մասնագետների համար	21,782,680
	Բնագիտամաթեմաթիկական կրթություն հայ երիտասարդների համար	47,399,938
	Համագործակցային տեխնոլոգիաներ և տվյալների գիտություն Խելացի քաղաքների հավելվածներում	1,952,500
	Հայաստանում և Վրաստանում տնային պայմաններում առանց ծխի մասշտաբային միջամտության իրականացում	32,439,951
	Հայաստան ԱՄՆ-ի համագործակցությունը քրոնիկ հիվանդությունների դեմ պայքարի նպատակով սոցիալական որոշիչ գործոնների գիտության ոլորտում կրթության միջոցով	21,444,282
	Ժուռնալիստիկայի մագիստրոսի ծրագրի և գերազանցության կենտրոնի հիմնում	84,907,281
	Այլ կազմակերպություններից ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	682,423,415
	Տարածքի վարձակալության և այլ վճարներ կազմակերպություններից Հիմնադրամի ծախսերը կատարելու համար ֆինանսական միջոցների աղբյուր	1,189,900,360
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Անհատույց ստացված դրամական միջոցներ ֆիզիկական անձանցից, գրադարանային վճարներ, ուսանողական կացարանի վճարներ, քնությունների և թեստերի վճարներ	166,659,610
	Բարձրագույն կրթության ուսանողների ուսման վճարներ	2,702,331,325
	Հետբուհական կրթության ուսանողների ուսման վճարներ	374,694,845
	Անգլերենի և այլ դասընթացների մասնակիցներից վճարներ	292,002,761
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	2,094,874,187	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		

11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Բարձրագույն կրթություն	1,829,002,165	
Հետբուհական կրթություն	658,201,997	
Անգլերենի և այլ դասընթացներ	236,966,653	
Ալպյան լեռնային խոտի մարգագետինների կառավարում	2,289,957	
Բարելավված ջրային կառավարում Հայաստանում	602,208	
Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն	225,298,568	
Խելացի և տվյալների վրա հիմնված համակարգերի գագաթնաժողով	14,486,559	
Ինտեգրված թվային համակարգ՝ ծովային տվյալների և տեղեկատվական ծառայությունների համար	17,729,002	
"Սոցիալական վերափոխում ջրային տնտեսության ոլորտում՝ «քաղաքացի գիտնականների» ներգրավվման միջոցով	23,771,979	
Հանրային քաղաքականություն, փորձագիտություն, վստահություն	12,000	
«ԿՈՊԵՐՆԻԿՈՒՍ» համակարգի միջոցով Սևծովյան ավազանում իրականացվող շրջակա միջավայրի մոնիտորինգ	56,554,352	
Հայաստանում Էներգետիկայի Տրանսֆորմացիայի Ոլորտում Կլիմայական Լուծումների Գիտական Հետազոտությունների Զարգացման Ծրագիր (ԷՏԿԼԳՀՋ)	314,008,433	
Գիտության և տեխնոլոգիաների միջոցով դեպի գլոբալ նորարարություն» նախաձեռնություն, (GIST)	1,832,980	
Քաղաքական Տնտեսության Վերլուծություն Հայաստանում Ջրային Տնտեսության Բարելավման վերաբերյալ	25,734,468	
Հարկային ծախսերի օպտիմալացման և ազդեցության գնահատման մշակում	3,321,666	
Համագործակցության համաձայնագիր «Հայ-ամերիկյան բժշկական ասոցիացիա» (AAMA) - ի հետ կազմակերպելու մի շարք կրթական միջոցառումներ	420,417	
Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարություն	5,369,190	
Ծխախոտային արդյունաբերության մեջ՝ վաճառքի կետերում ծխախոտի գովազդի, առաջխաղացման և հովանավորչության արգելքի միջամտության հետաքննություն և հակազդում Հայաստանում	7,650,775	
Ժողովրդավարական պրակտիկաների եւ մեդիա գրագիտության ամրապնդման նախագիծ	1,508,978	

ԱԼՊՄԱԿԱ Ալպյան Լեռնային Մարգագետինների Կառավարում (Կոպենհագենի համալսարան)	3,573,869
Կանաչ Օրակարգ Հայաստան GUMA Վրաստան Ուկրաինա Մոլդովա Հայաստան	6,850,841
Սերվիս Թայթան վաճառքի ավտոմատացում (հետազոտել և մշակել ալգորիթմների նախատիպեր	2,047,628
Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն	21,938,751
GIST ինովացիոն կենտրոն ծրագիր	1,594,864
Համագործակցային տեխնոլոգիաներ և տվյալների գիտություն Խելացի քաղաքների հավելվածներում	957,078
Հայաստան ԱՄՆ-ի համագործակցությունը քրոնիկ հիվանդությունների դեմ պայքարի նպատակով սոցիալական որոշիչ գործոնների գիտության ոլորտում կրթության միջոցով	9,310,038
Հայաստանում և Վրաստանում տնային պայմաններում առանց ծխի մասշտաբային միջամտության իրականացում	11,515,623
Բնագիտամաթեմաթիկական կրթություն հայ երիտասարդների համար	44,301,138
Անգլերեն ծրագիր ԶԼՄ-ների և PR մասնագետների համար	12,225,228
Ժուռնալիստիկայի մագիստրոսի ծրագրի և գերազանցության կենտրոնի հիմնում	79,359,684
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	8,644,745,386
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	3,381,470,437

Նշումներ՝

9. Հիմնադրի ներդրումը՝ Հիմնադրամի ծախսերը կատարելու համար ֆինանսական միջոցների աղբյուր 2,094,874,187 դրամ որից՝ Հիմնադրի ներդրում այլ համալսարանում սովորող ուսանողի ուսման վարձի փոխհատուցում 24,525,458 դրամ 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր 4,050,000 դրամ վերադարձվել է պետական բյուջե ուսանողական նպաստներից և կրթաթոշակներից

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 10 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ Digitally signed by KHEROLYANTS VARDUHI 7511690173

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի անդամներ	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամ (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Grant Thornton

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

3 հունիսի 2025թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Հոգաբարձուների խորհրդի անդամներ

1. Լոուրենս Հ. Փիթս, բ.գ.դ., «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Կալիֆոռնիայի համալսարանի ակադեմիական հարցերի նախկին ռեկտոր և գործադիր փոխնախագահ, Կալիֆոռնիայի համալսարանի (Սան Ֆրանցիսկո) պատվավոր պրոֆեսոր, նյարդավիրաբուժություն

2. Ժաննա Անդրեասյան, ֆ.մ.գ.դ., Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար՝ նշանակված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

3. Սյուզի Միսիրյան Անտունյան, իրավագիտության դոկտոր, խորհրդատու, Հյուսիսային Կալիֆոռնիայի Համաշխարհային գործերի խորհրդի նախկին գլխավոր գործառնական տնօրեն

4. Արմեն Տեր-Կյուրեղյան, փիլիսոփայության դոկտոր, «Հայաստանի Ամերիկյան Համալսարանի» պատվավոր նախագահ, Թայսեի Քաղաքացիական ճարտարագիտության պատվավոր պրոֆեսոր, Կալիֆոռնիայի համալսարան, Բերքլի

5. Պերճ Սեդրակյան, իրավագիտության դոկտոր, «Դի Էլ Էյ Փայփեր» ընկերության գործընկեր, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ

6. Վազգեն Լ. Յակուբյան, , «Լեոն Ա. Յակուբյան Քոնթրաքթինգ» ՍՊԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անդամ, Տնօրենների կենտրոնական խորհրդի անդամ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Եկամուտներ			
Հասույթ կրթական ծառայություններից	5	4,205,003	3,900,938
Եկամուտ շնորհներից և նվիրատվություններից		2,546,714	2,172,991
Եկամուտ վարձակալությունից		602,669	565,386
Այլ եկամուտ		44,231	38,166
		7,398,617	**6,677,481**
Ծախսեր			
Ուսումնական ծախսեր	6	(5,046,433)	(4,748,545)
Վարչական և ընդհանուր ծախսեր	7	(1,885,949)	(1,716,888)
Այլ ծախսեր	8	(301,310)	(481,984)
Գործառնական գործունեությունից արդյունք		**164,925**	**(269,936)**
Ֆինանսական եկամուտ		3,414	4,795
Ֆինանսական ծախսեր		(12,408)	(1,792)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	9	16,259	2,227
Շահույթ (վնաս) մինչև հարկերը		**172,190**	**(264,706)**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	10	-	-
Տարվա շահույթ (վնաս)		**172,190**	**(264,706)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**172,190**	**(264,706)**
Զուտ ակտիվները տարվա սկզբին		517,248	781,954
Զուտ ակտիվները տարվա վերջին		689,438	517,248

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	1,268,704	915,274
Ոչ նյութական ակտիվներ	12	10,308	9,550
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	24,167	43,280
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,303,179**	**968,104**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	101,920	83,650
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	819,832	593,164
Ժամկետային ավանդներ	16	33,815	33,956
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	1,260,197	793,095
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2,215,764**	**1,503,865**
Ընդամենը ակտիվներ		**3,518,943**	**2,471,969**
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	18	702,149	402,657
Վարձակալության գծով պարտավորություններ	19	83,307	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**785,456**	**402,657**
Ընթացիկ			
Հետաձգված եկամուտ	20	1,550,924	1,127,033
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	470,735	425,031
Վարձակալության գծով պարտավորություն	19	22,390	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**2,044,049**	**1,552,064**
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		689,438	517,248
Ընդամենը զուտ ակտիվներ		689,438	**517,248**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**3,518,943**	**2,471,969**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունվարի 3-ին

Բրյուս Մայքլ Բոյնտոն
Նախագահ

Մարգարիտա Գևորգյան
Ֆինանսական ծառայությունների գծով տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Տարվա շահույթ (վնաս)	172,190	(264,706)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	285,076	231,888
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(1,445)	(4,482)
Ֆինանսական եկամուտ	(3,414)	(4,795)
Ֆինանսական ծախս	12,408	1,792
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(16,259)	(2,227)
Գործառնական շահույթ (վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**448,556**	**(42,530)**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(207,102)	177,142
Պաշարների փոփոխություն	(18,270)	(26,739)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	49,406	(59,348)
Ակտիվներին վերաբերող շնորհների փոփոխություն	247,271	(59,514)
Հետաձգված եկամտի փոփոխություն	453,899	209,538
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	**973,760**	**198,549**

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամը (Հիմնադրամ) տրամադրում է ամերիկյան համակարգին և բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան համալսարանական կրթություն, գիտական հետազոտություններ և հասարակական ծառայություններ: Կրթական հնարավորությունները հասանելի են ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանյան ուսանողների համար: Հիմնադրամի նպատակն է պատրաստել այնպիսի շրջանավարտներ, որոնք կարևոր դեր կունենան Հայաստանի և տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումներում:

Հիմնադրամը տրամադրում է բակալավրի աստիճան հետևյալ մասնագիտություններում. բիզնես, տնտեսագիտություն, անգլերեն և հաղորդակցություն, քաղաքականություն և կառավարում, համակարգչային գիտություն, տվյալների գիտություն, ճարտարագիտություն, շրջակա միջավայրի և կայուն զարգացման գիտություններ և բուժքույրական գործ, ինչպես նաև մագիստրոսի աստիճան հետևյալ մասնագիտություններում. բիզնեսի կառավարմում, տնտեսագիտություն, կառավարում և վերլուծություն, արդյունաբերական ճարտարագիտություն և համակարգային կառավարմում, համակարգչային և տեղեկատվական գիտություններ, միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն, հասարակայնության հետ կապեր, բազմապլատֆորմային լրագրություն, մարդու իրավունքներ և սոցիալական արդարադատություն, իրավագիտություն, անգլերենի ուսուցում որպես օտար լեզու և հանրային առողջություն:

Իր գործունեության համար լրացուցիչ միջոցներ ձեռքբերելու նպատակով Հիմնադրամը վարձակալական հիմունքներով տրամադրում է իր կողմից վերահսկվող ազատ տարածքները տարբեր ընկերությունների:

Հիմնադրամը նաև ներգրավված է համայնքային զարգացման տարբեր ծրագրերում: Դրանցից խոշորը գյուղերի զարգացման Թուրփանջյան ծրագիրն է, որի նպատակն է աջակցել Հայաստանի գյուղերի բարելավված տնտեսական ակտիվությանը՝ մեծահասակների կրթության միջոցով:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամը 1991թ. սեպտեմբերի 21-ի Հայաստանի Հանրապետության Մինիստրների խորհրդի # 570՝ «Հայ-ամերիկյան համատեղ համալսարանի հիմնադրման վերաբերյալ» որոշմամբ հիմնադրված «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» ՍՊԸ-ի իրավահաջորդն է: «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» ՍՊԸ-ն հիմնադրվել էր Հայաստանի Հանրապետության կառավարության և «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Կորպորացիայի (ՀԱՀԿ) կողմից:

Հիմնադրամը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40 հասցեում:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 472 մարդ (2023թ.՝ 468 մարդ):

Համապատասխանություն և անընդհատություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով՝ հիմնվելով ղեկավարության՝ Հիմնադրամի տեսանելի ապագայում գործունեությունը շարունակելու կարողության գնահատման վրա: Այս գնահատումը հիմնված է այն սպասումի վրա, որ Հիմնադրամն ունի բավարար ռեսուրսներ իր պարտավորությունները կատարելու և տեսանելի ապագայում գործունեությունը շարունակելու համար: Այս դատողությունը կազմելիս ղեկավարությունը հաշվի է առել գործոնների լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Հիմնադրամի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

ՀՀ ԿԲ-ն Հայաստանի կառավարության հետ համատեղ կարողացավ զսպել գնաճը, սակայն դա դժվարություններ ստեղծեց արտահանողների և արտարժութային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի այդ ռիսկերը արդյունավետորեն կառավարելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Հիմնադրամի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.06.2025 16:54